



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 սեպտեմբերի 2019 թվականի թիվ 105-Ս
ք. Երևան

«ՅՈՒՔՈՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳԻՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՅՈՒՔՈՄ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստաձրագիր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի սեպտեմբերի 23-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. Բավարարել «ՅՈՒՔՈՄ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստաձրագիր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստաձրագրի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2019թ. սեպտեմբերի 27-ի թիվ 105-Ա որոշման

Հեռուստաձրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«TB-3 International»	31.03.2021թ.